# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ. Սիս, հեռ. 077-200-720
էլ. փոստ sis.ararat@mta.gov

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<10 >> Ապրիլի 2017 թվականի N 07

### ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 03 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի դրույթներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

Հաստատել թիվ 03 նիստի օրակարգը:

1.Սիս համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղնշանակության հողերից գույքային միավոր առանձնացնելու և աճուրդ վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին:

2. Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղնշանակության հողերից մեկ տարով վարձակալության տալու , հողամասերի տարեկան վարձավճարի չափը սահմանելու մասին:

3.<< ՀԱՅ ՋՐՄՈՒՂ ԿՈՅՈՒՂԻ>> փակ բաժնետիրական ընկերության սեփականության իրավունքով անհատույց գույք հանձնելու մասին:

Ավագանու անդամներ՝

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ(0)

Ա. Բեգունց
Գ. Առաքելյան
Ե.Լազգիյան
Ա. Մարգարյան
Ռ. Աթայան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ

2017 թ Ապրիլի 10

գ. Սիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ. Սիս, հեռ. 077-200-720
էլ. փոստ sis.ararat@mta.gov

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10 » Ապրիլի 2017 թվականի N 08-Ն

## ՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ և ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային Օրենսգրքի 63-րդ հոդվածի 3-րդ և 67-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով Սիս համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Սիս համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ծածկագիր /03-083-0105-/, ծածկագիր / 03-083-0510-/ գյուղնշանակության, գործառնական նշանակությունը՝ արոտավայր հողակտորներից առանձնացնել 4.1983 հա հողակտոր, որպես առանձին միավոր և տալ սեփականության վկայական:
2. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի անշարժ գույքի հատակագծին համապատասխան համայնքային սեփականություն հանդիսացող

Լոտ 1- ծածկագիր /03-083-0105-/ , ծածկագիր / 03-083-0510-/ գյուղնշանակության արոտ 4.1983 հա հողակտորը աճուրդ- վաճառքի միջոցով օտարել:

3. Օտարվող հողամասի մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100 % -ի չափով:
4. Օտարվող հողամասի առավելագույն չափ սահմանել4.1983 հա:
5. Հավելման չափը սահմանել 10.0 հազար դրամ:

Ավագանու անդամներ

| Կողմ (5) | Դեմ (0) | Ձեռնպահ(0) |
|---|---|---|
| Ա. Բեգունց | | |
| Գ. Առաքելյան | | |
| Ե.Լազգիյան | | |
| Ա. Մարգարյան | | |
| Ռ. Աքսայան | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ

2017 թ Ապրիլի 10
գ. Սիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ. Սիս, հեռ. 077-200-720
էլ. փոստ sis.ararat@mta.gov

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 10 » Ապրիլի 2017 թվականի N 09-Ն

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ՄԵԿ ՏԱՐՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ , ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 28.10.2010թ. N 1477-Ն որոշումը՝ արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն հանդիսացող գյուղնշանակության հողերից՝
-արոտ
14,0 հա ծածկագիր /03-083-114-030/ ,
16,0 հա ծածկագիր / 03-083-114-001/ ,
1,6 հա ծածկագիր /03-083-035-/,
12,5 հա ծածկագիր /03-083-0025-/
ընդամենը -44.1հա
-գյուղնշանակության խոտհարք 3,5 հա ծածկագիր /03-083-109-/
տալ վարձակալության մեկ տարի ժամկետով: Խոտհարքներից, արոտավայրերից օգտվելու վճարի չափը սահմանել մեկ հա-ի համար հազար դրամ:

Ավագանու անդամներ

| Կողմ (5) | Դեմ (0) | Ձեռնպահ(0) |
|---|---|---|
| Ա. Բեգումց | | |
| Գ. Առաքելյան | | |
| Ե.Լազգիյան | | |
| Ա. Մարգարյան | | |
| Ռ. Աթասյան | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ

2017 թ Ապրիլի 10
գ. Սիս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ. Սիս, հեռ. 077-200-720
էլ. փոստ sis.ararat@mta.gov

# Ո Ր Ո Շ Ու Մ

« 10 » Ապրիլի 2017 թվականի N 10 – Ն

### << ՀԱՅ ՋՐՄՈՒՂ ԿՈՅՈՒՂԻ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային Օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետի, ինչպես նաև համաձայն Հայաստանի հանրապետության կառավարության 22.12.2011թ <<Նոտարական վավերացում չպահանջվող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին>> թիվ 1851-Ն որոշման՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1.Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնել << ՀԱՅ ՋՐՄՈՒՂ ԿՈՅՈՒՂԻ>> փակ բաժնետիրական ընկերությանը:

2. Անշարժ գույքի տնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Արարատի մարզ, Սիս համայնք, Ձկնաբույծների փողոց, թիվ 15/1:

Գույքի ծածկագիրն է 03-083-0503-00004 սեփականության վկայական N07122016-03-0037 տրված 07.12.2016թ.

Գույքի մակերեսը-0,16514 հա, առկա է 20.9 քմ խորքային հոր և 8.35 քմ պարիսպ

Գույքի նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների:

Հողամասի գործառնական նշանակությունը՝ կոմունալ ենթակառուցվածքների հողեր

Ավագանու անդամներ

Կողմ (5)
Ա. Բեգունց
Գ. Առաքելյան
Ե.Լազգիյան
Ա. Մարգարյան
Ռ. Աթայան

Դեմ (0)

Ձեռնպահ(0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ ԱՐՄԵՆ ԵԳՅԱՆ

2017 թ Ապրիլի 10
գ. Սիս